ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի
ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 16:00 քաղաք Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում հրավիրվել է Վաղարշապատ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ հերթական նիստը, որին մասնակցելու համար ներկայացել են Վաղարշապատ համայնքի ավագանու 3 անդամ, այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը՝ հիմք ընդունելով գրանցման արդյունքները:

Վաղարշապատ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստին ներկա են համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Երվանդ Խաչատրյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավիրված ավագանու նիստին օրենքով սահմանված կարգով կես ժամվա ընթացքում չի ներկայացել նիստ վարողը՝ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանը և ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ուստի նիստը իրավազոր չէ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդված 3-րդ մասով՝ նիստը համարվում է չկայացած:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 16:30-ին:

Նաիրա Բասենցյան _____

Լիլիթ Միրզախանյան _____

Գոհար Նիկողոսյան _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ